

40 ծարիր, իսկ քրք. տառերու համար 78 կապար և 30 ծարիր : Այս խառնուրդով է որ ձեռք կը բերուի փափաքուած կարծրութիւնը՝ մամուլին ճնշման պատշաճօրէն դիմացող : Այդ երկու նիւթերը սակայն բունաւոր ըլլալով, հեզ գրաշարը դատապարտուած է ամեն օր ատոնց փոշին շնչելու, որով իր արեան շրջանը կը խանգարի՝ ծնունդ տալով տեսակ տեսակ հիւանդութեանց : — Շուտիկ գրաշար մը օրուան մէջ 10 հազար գիր կրնայ ժողվել բջիջներուն մէջէն և իր գիրքնկալին մէջ շարել : Հաշիւ ըրած են որ տարուան 300 օրերուն՝ գրաշարի մը աջ ձեռքը կ'ընթանայ միջին հաշուով 1300 մղոն հեռաւորութիւն մը :

Երբ գիրքնկալը լցուի, տողերը կը սեղմեն և գիրքնկալին մէջէն հանելով կը գետնեղեն «կալէ»ին մէջ : — Տպագրութիւնն այն գործողութիւնն է որով բուդրին վրայ կը փոխանցուի դրոշմը տառերուն՝ իրենց շարուած ձեւով : Հեղինակը կամ փորձերու սրբագրիչը երբ տպուելուն հրամանը տայ (**պօն ա քիւէ**), իշադրութեան (**էմքօզիսիօն**) գործողութեան կը ձեռնարկուի :



ՔԱԶԿԱՄԱՄՈՒԼ (PRESSE A BRAS)

ձեռք մեր դարը՝ տիպը (**քիււած**) շարունակուած է բազկամամուլներով որոնք սկսած են տեղի տալ այլ ևս՝ նետգնետէ կատարեալագործուած մեքենաներու առջեւ որոնց պատկերները ցուցուցինք քիչ մը անդին՝ 44, 45 և 46 քիւերով :

♦♦

Բարից հրատարակուած «Մասեաց Աղանի» ամսաբերքին 1856 Հոկտեմբերի քիւին մէջ հրատարակուած կը տեսնենք լիակատար համայնապատկերը տպարանի մը կազմածքին ու աշխատութեանց՝ գունաւոր ընտիր տպագրութեամբ, — ա՛յնքան պատուարեր՝ իր հայ տպագրիչին, ձանիկ Արամեանի համար :

